

ՀՀ ԿԳՄՄՆ

«Կանթեղ» կրթամշակութային սոցիալ-բարեգործական հասարակական
կազմակերպություն

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ «Էպոսը որպես ժողովրդական ստեղծագործության տեսակ,
աշխարհի մյուս ժողովուրդների էպոսները»

Մասնակցի անուն, ազգանուն՝ Նվարդ Մելիքյան

Դպրոց՝ Լոռու մարզ, Վանաձորի Վ. Մելիքսեթյանի անվան հ. 28
հիմնական

Դասավանդած առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Վանաձոր 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Ազգային էպոսների մասին	4
«Սասունցի Դավիթ» էպոսի ճյուղերի ձևավորումը	8
«Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը դպրոցում.....	14
Եզրակացություն.....	18
Օգտագործված գրականության ցանկը	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդական բանահյուսության գանձերից ամենաարժեքավորը «Սասնա ծռեր» վիպերգն է, որն իր ճյուղերից մեկի անունով հայտնի է որպես «Սասունցի Դավիթ» էպոս: Այս վիպերգի փառքը տարածվել է աշխարհով մեկ և արժանացել միջազգային ճանաչման և գնահատանքի: Դարերի ընթացքում հղկված ու հարստացած էպոսը առանձնանում է աշխարհի ժողովուրդների էպոսներից: Էպոսի դարավոր պատմությունը ցույց է տալիս, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը դարեր ի վեր ոգևորել հայ ժողովրդին և հասել մինչև մեր ժամանակներն ու այսօր էլ իր գաղափարներով խիստ այժմեական է: Հետազոտության մեջ փորձել ենք ցույց տալ հայ ժողովրդական էպոսի և մյուս ժողովուրդների էպոսների ընդհանրական գծերը և առանձնահատկությունները: Մեր ազգային հերոսները ունեն ընդհանուր գծեր, սակայն նրանք խորապես անհատականացված կերպարներ են: Հնարավոր չէ շփոթել Սանասարին Մեծ Մհերի, Դավթին և Փոքր Մհերի հետ: Նմանապես անհատականացված են կին հերոսները: Յուրաքանչյուր հերոս իր մեջ մարմնավորում է մեր ժողովրդին բնորոշ որևէ հատկանիշ, և բոլորը միասին արտացոլում են մեր ազգի ինքնաճանաչողական ոգին, ազատության և անկախության ձգտող ժողովրդին:

Էպոսի հերոսները արդարամիտ են, վեհանձն, բռնության դեմ անողոք, լավի դեմ անսահման բարի ու սրտակից, մանկական մաքուր պարզությամբ: Բոլոր պարագաներում հերոսները չեն կորցնում իրենց մարդկային բարձր առաքինությունները:

Հետազոտության նպատակն է՝

- ծանոթացնել տարբեր ժողովուրդների էպոսներին, ցույց տալ ընդհանրություններն ու առանձնահատկությունները,
- զարգացնել «Սասունցի Դավիթ» էպոսի մասին գիտելիքները,
- սերմանել աշակերտների մեջ հայրենասիրություն, մարդասիրություն, ազնվություն, հանդուրժողականություն:

Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների հետազոտությունները, հրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

Ազգային էպոսների մասին

Էպոսը նախ և առաջ ներկայանում է որպես ժողովրդի հավաքական մտածողության արտահայտություն: Յուրաքանչյուր ժողովրդի էպոս տվյալ ժողովրդի հոգեկերտվածքն է, ներաշխարհի, աշխարհայացքի, անցյալի ու ապագայի նկատմամբ երազանքների դրսևորումը:

Էպոսը գրականության ամենահին ժանրերից մեկն է: Նա ի վիճակի է ընթերցողին ցույց տալ ոչ միայն այն իրադարձությունները, որոնք վաղուց անցել են, այլև ի գորու է ցույց տալ պատումի հոգին: Եվ հաշվի առնելով այն փաստը, որ էպոսը դեռ ժամանակակից գրողների և բանաստեղծների ամենասիրած ժանրերից մեկն է, կարելի է եզրակացնել, որ սա գրականության ամենակարևոր ձևերից մեկն է: Եվ նրա բազմակողմանիության շնորհիվ յուրաքանչյուր ընթերցող կկարողանա գտնել էպիկական այնպիսի նյութ, որը համապատասխանում է իր ներքին մշակութային եւ հոգևոր կարիքներին:

Էպոս (հին հունարեն՝ խոսք, ասք, պատմություն) գործածվում է երկու իմաստով 1. Լայն առումով գրական երեք սեռերից մեկը (էպիկական, քնարական, դրամատիկական): 2. Նեղ ժանրային առումով ժողովրդական հերոսական կամ ավանդական վեպ, վիպական բանահյուսության ծավալուն և բարդ տեսակ, որը բաղադրվում է վիպական ու պատմահերոսական երկերից, ավանդություններից, զրույցներից: Ազգային էպոսը էպիկական բովանդակությամբ էպիկական ժանրի գործ է, որը նկարագրում է տվյալ էթնոսի ծագման և զարգացման պատմությունը, կամ տվյալ ազգության ինքնորոշման կամ ինքնագիտակցման պատմության կարևորագույն դրվագները, իրադարձությունները, որոնց շուրջ կառուցվում են ստեղծագործությունները:

Աշխարհի նշանավոր էպոսները մշակվել են: Օրինակ, հունական էպոսը մշակեր է Հոմերոսը, որը հայտնի է «Իլիականը» և «Ոդիսական» գրքերով, պարսկական էպոսը մշակել է Ֆիրդուսին «Շահ-Նամե» խորագրով, Շարլ դը Կոստերը մշակել է ֆլամանդական էպոսը՝ «Տիլ Ուլենշպիգելը»: Միջին դարերում համարվում էր, որ Հոմերոսի «Իլիականը» հիմնված է պատմական փաստացի իրադարձությունների վրա, և որ Տրոյական պատերազմը պետք է դիտվի որպես Եվրոպական միապետների ծագումնաբանության պատմական հիմնավորում:

Վերգիլիոսի «Էնեականը» դիտվում էր որպես «Իլիական»-ի հռոմեական համագոր տարբերակը: «Իլիականի» նյութը շարադրված է 15 700 տողում, որոնք դեռ անտիկ գիտնականները , ըստ հունական այբուբենի տառերի թվի , բաժանել են 24 գրքի կամ երգի:

Ի տարբերություն «Իլիականի»՝ «Ոդիսականի» սյուժեն ոչ թե հերոսական, այլ հեքիաթային է, արկածային: Պատմում է Իտակե կղզու արքա Ոդիսևսի արկածների մասին տասը տարի տևած Տրոյական պատերազմից հետո տուն վերադառնալու ճանապարհին, ինչպես նաև Իտակեում Ոդիսևսին սպասող հավատարիմ կնոջ՝ Պենելոպեին բաժին հասած փորձությունների մասին: «Ոդիսականը» նույնպես բաժանված է 24 գրքի կամ երգի: «Իլիականը» և «Ոդիսականը» մարդկության մանկության շրջանում ստեղծված գրական հուշարձաններ են, որտեղ աստվածները, կիսաստվածները և մահկանացուները կողք կողքի են, որոնք պայքարում են գեղեցկությանը տիրանալու համար: Գեղեցկություն. ահա մարդկային կյանքի զգացական-բանական գլխավոր խորհրդանիշներից մեկը, որին տիրանալու ճանապարհին բազում փորձությունների են ենթարկվում հերոսները: Այսպիսով՝ «Իլիական»-ում պատկերված աքայացիների և տրոյացիների միջև պատերազմը մղվում էր հանուն Հեղինեի, որին առևանգել էր Տրոյայի թագաժառանգ Պարիսը:

Գեղեցկություն, կյանք, հայրենիք. ահա սրանք են այն հիմնական խորհրդանիշները, որոնց համար պետք է ապրել և փորձությունների ենթարկվելով՝ իմաստնանալ:

Գերմանական ազգային էպոսը՝ «Նիբելունգների երգը» անվանվում էր նաև «պոեմ»՝ գրված անհայտ հեղինակի կողմից, որտեղ ներկայացվում է գերմանական ցեղերի և Արևելյան Եվրոպայում դիրքերն ամրապնդած հոների փոխհարաբերության պատմությունը: Գերմանական ասքի հերոսը Ջիգֆրիդն է, ով փրկում է գուշակուհի արքայադուստր Բրունհիլդին, ապա կորցնում և՞ հարսնացուին, և՞ կյանքը: Գերմանական էպոսում փառաբանված են ժողովրդի անկեղծ, զուսպ և, միևնույն ժամանակ, բուռն, պարզ և խոր հայրենասիրությունը, կենսասիրությունն ու կենսախնդությունը: Մարդկային դաժանությունը ևս մեծ տեղ ունի պոեմում, բայց, այնուամենայնիվ, նույնիսկ այդ դաժանության մեջ վեհություն կա. այն լավագույն արժեքն է, որ հասել է գերմանացիներին միջնադարյան իրենց պատմությունից: Ահա թե ինչու է ազգային էպոսն այդքան սիրված Գերմանիայում:

Ֆրանսիական միջնադարյան դյուցազներգությունը՝ «Երգ Ռոլանդի մասին»-ը, համաշխարհային դյուցազներգական գրականության գլուխգործոցներից է, որտեղ քնարական շնչով և համապարփակ ընդհանրացումներով արտահայտված են հավատարմության զգացումն ու խիզախության վեհությունը: Ռոլանդը իր զինվորների հետ միասին զոհվում է հանուն Ֆրանսիայի և քրիստոնեական հավատի:

19-րդ դարում Նինվեում՝ Աշուրբանիպալի գրադարանում կատարված պեղումների ժամանակ առավել ամբողջական տարբերակով հայտնաբերվել է սեպագրերով գրված աշխարհի ամենահին ստեղծագործություններից մեկը՝ «Գիլգամեշ» շումերաբաբելական հերոսական էպոսը: Այն գրված է եղել վեցասյուն պնակիտների վրա և ներառել է շուրջ երեք հազար տող: Այս էպոսում համաշխարհային գրականության մեջ առաջին անգամ բարձրանում է մարդու մահկանացու լինելու և նրա կյանքի իմաստի խնդիրը, և մահվան ողբերգական անխուսափելիությունը հաղթահարվում է հերոսական արարքների անմահությամբ:

Ֆինների և կարելների «Կալեվալա» ազգային էպոսում պատմվում է երկրի, երկնքի Արևի և Լուսնի արարման և բռնության դեմ պայքարի մասին:

Պարսկական «Շահնամե» վիպերգության մեջ նկարագրվում է Իրանի, իսկ մասամբ և հարևան ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու հոգևոր պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 7-րդ դար: Սա ամենաերկար պոեմն է, որի ծավալը երկու անգամ մեծ է, քան «Իլիականը» և «Ոդիսականը» միասին վերցրած:

Ժողովրդական հերոսական բանահյուսության այս տեսակը սնվում է պատմահերոսական գրույցներից, ավանդություններից և խտացնում իր մեջ ժողովուրդների նվիրական երազանքները և լավատեսությունն ու հավատը ապագայի հանդեպ:

Էպոսի հիմնական առանձնահատկություններն են՝

- 1) պատմվածքի կենտրոնում՝ մարդ, նրա ճակատագիրը եւ մասնակցությունը պետության ճակատագրին (քաղաք եւ այլն);
- 2) պատմվածքի ձևը՝ ուղևորություն արկածների և սխրանքների կատարման հետ,

- 3) Հերոսի կերպարը մարտիկի կերպարն է. հաղթող, հերոսական անձնավորություն;
- 4) Հատուկ պլանի հերոսների պարտադիր ներկայությունը ` գերագույն (Հունաստանում և Հռոմում աստվածներն են).
- 5) լեզուն և ոճը շատ ծանր են, ծանրաշարժ; դանդաղ զարգացող սյուժեներ.
- 6) Պատմության ընթացքում հեղինակը տարբեր դիրքեր է վերցնում. այնուհետև դիտորդը, իրադարձությունների մասնակիցը:

Բանահյուսական ժանրերից խոշորագույնը իր ընդգրկումներով, ծավալով, նշանակությամբ ժողովրդական էպոսն է, վիպերգությունը կամ էպոպեան, դյուցազներգությունը: Էպոսը ձևավորվում է աստիճանաբար, ժողովրդական երգերից ու զրույցներից, և ի վերջո հերոսական երգերն օրգանապես միավորվում, մեկ ամբողջական ստեղծագործություն են դառնում: Այդպիսիք են հետևյալ էպոսները`

- <<Գիլգամեշ>> — շումերական
- <<Իլիական>> — հունական
- <<Սասունցի Դավիթ>> — հայկական
- <<Ասք Բգորի գնդի մասին>> — ռուսական
- <<Նիբելունգների երգը>> — գերմանական
- <<Ռամայանա>> — հնդկական
- <<Ռուլանդի երգը>> — ֆրանսիական
- <<Միդ>> — իսպանական
- <<Շահ-Նամե>> — իրանական
- <<Հայավաթի երգը>> — հարավամերիկյան
- <<Մանաս>> — ղրրղրգական
- <<Ամիրիանի>> — վրացական
- <<Իլյա Մուրոմեց>> — ռուսական
- <<Կալեվալա>> — կարելոֆիննական

Իր գաղափարներով ու գեղեցիկ հորինվածքով «Մասնա ծներ» էպոսը աշխարհի լավագույն վիպերգերից է , եթե ոչ լավագույնը: Հիշենք, որ 1964 թվականին վիպերգը ներկայացվել էր աշխարհի վիպերգերի մրցույթին և գրավել առաջին տեղը:

Շատ գեղեցիկ է նկարագրում մեծանուն ակադեմիկոս Հովսեփ Օրբելին հայ ժողովրդական էպոսի ստեղծումը՝ այն համեմատելով մարգարտի ստեղծման հետ. «Քանի դեռ խեցու մեջ աննշան ավազահատիկի ձևով կողմնակի մարմին չի ներթափանցել, քանի դեռ կենդանին չի հիվանդացել, և նրա վրա չի գոյացել չնչին աչքի համար անտեսանելի կրաշերտ, ոչ մի մարգարտի մասին խոսք լինել չի կրող: Այնուհետև ելուստի շուրջը շերտավորվում է աղերի ազդեցության տակ գոյացած նստվածքները, և ի վերջո ստացվում է սքանչելի մարգարիտ, որը հետագայում կարող ենք նայել ու հիանալ»: Իսկապես, ինչպես խեցու մեջ մարգարիտ է գոյանում, այնպես էլ հյուսվել է հայ ազգային էպոսը: Հիմքում թեթև աննշան թվացող մի կորիզ է, սակայն, այն, իր վրա նորանոր շերտեր ընդունելով, վերածվել է մի չքնաղ մարգարտի, որն իր անջնջելի հետքն է թողել ու թողնում սերունդների վրա՝ արժանի տեղ գրավելով համաշխարհային գրական մեծ օվկիանում: Այն ոչ միայն ազգային կենդանի նկարագիր է, այլև համամարդկային կենսական իրավունքի պաշտպանության լավագույն օրինակ: «Ամեն ժողովրդի էպոս տվյալ ազգի անձագիրն է, նրանով նա իրավունք ունի ներկայանալու աշխարհին», - գրում է բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը:

«Մասունցի Դավիթ» էպոսի ճյուղերի ձևավորումը

«Մասունցի Դավիթ» էպոսը գոյություն է ունեցել ժողովրդի մեջ և բանավոր ավանդվել է հին ժամանակներից , բայց գրի է առնվել և գիտությանը հայտնի է դարձել միայն 19-րդ դարի երկրորդ կեսին: 1873 թվականին հայ բանահավաքչության մեծագույն երախտավոր Գարեգին Սրվանձտյանը Արևմտյան Հայաստանի Մուշ գավառի Առնիստ գյուղում Կրպո անունով մի բանասացից լսում և գրի է առնում այդ հերոսավեպը, որը հաջորդ տարի տպագրում է Կոստանդնուպոլսում առանձին գրքով՝ «Գրոց ու բրոց և Մասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» խորագրով:

Մինչև Գ. Սրվանձտյանի հայտնագործությունը «Սասունցի Դավիթ» հերոսավեպի մասին դեռևս 16-րդ դարում տեղեկություններ են իմացել պորտուգալացի Անտոնիո Տենեյրոն և Մեստրե Աֆոնսոն՝ իրարից անկախ ճամփորդելով Արևելքում, այդ թվում նաև Հայաստանում, եղել են Սասունում և տեղացի հայերից իմացել զանազան գրույցներ Դավիթի և նրա կնոջ՝ Խանդուրի մասին: Այդ տեղեկությունները թեպետ տպագրված են եղել, սակայն լեզվի անմատչելիության պատճառով անհայտ են մնացել հայագետներին:

Մինչև Սրվանձտյանի գյուտը հայագիտական գրականության մեջ ևս ժողովրդական ավանդությունների ձևով պահպանվել էին կցկտուր հիշատակումներ Դավթի և Խանդուրի մասին: Սրվանձտյանի շնորհիվ հայ ժողովրդի գրագետ և կրթված ներկայացուցիչների մեջ բուռն հետաքրքրություն առաջացավ այդ հերոսավեպի նկատմամբ: 1886 թվականին Մանուկ Աբեղյանը մի պանդուխտ մոկացուց գրի է առնում երկրորդ պատումը, որը տպագրվում է Շուշի քաղաքում 1889 թ. «Դավիթ և Մհեր» խորագրով: Որոնումները շարունակվում են տարբեր բանահավաքների կողմից, և մեկը մյուսի հետևից հրատարակվում նոր պատումներ: Հատկապես 1960-ական թվականների վերջերի և 1970-ականներին հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներ (Գ. Գրիգորյան, Ս. Հարությունյան, Ա. Սահակյան, Ռ. Գրիգորյան) անձնական նախաձեռնությամբ կամ գիտական արշավախմբերով Հայաստանի տարբեր շրջաններից գրի են առնում հերոսավեպի մոտ հարյուր տարբերակ:

Այսպիսով, շուրջ հարյուր տարվա ընթացքում արևմտահայ , մասամբ և արևելահայ բարբառներով ու խոսվածքներով գրառվում են էպոսի մոտ 160 պատում:

1939 թ. Սովետական Միությունում հանդիսավորությամբ տոնվում է «Սասունցի Դավիթ» հերոսապատումի 1000-ամյա հոբելյանը, որի կապակցությամբ պրոֆեսորներ Մ. Աբեղյանի, Գ. Աբովի և ավագ գիտաշխատող Ա. Ղանալանյանի ջանքերով մինչ այդ գրառված տարբեր բարբառներով 60 պատումների հիման վրա հյուսվում է մի համահավաք բնագիր: «Սանասար և Բաղդասար» ճյուղը կազմում է Մ. Աբեղյանը, «Մեծ Մհեր» և «Սասունցի Դավիթ» ճյուղը՝ Գ. Աբովը, «Դավիթ և Խանդուր» հատվածը և « Փոքր Մհեր» ճյուղը՝ Ա. Ղանալանյանը:

Մանուկ Աբեղյանը նշում է. «Մ. Խորենացին գրում է , թե երբ Սենեքերիմ թագավորի Ադրամելեք և Սանասար որդիներն իրենց հորն սպանելով փախչում են Հայաստան,

Սանասարին «մեր քաջ նախնի» Սկայորդին բնակեցնում է մեր աշխարհի հարավ-արևմտյան կողմում, և թե նրա սերունդները լցնում են Սիմ լեռը, որոնց առաջավորներից այնուհետև ծագում են Աղձնեաց բղեշխները: Իսկ մյուս եղբայրները բնակվում են նույն լեռան հարավ-արևելյան կողմում, և թե նրանցից ծագում են, ըստ պատմագրի (Մար-Աբաս), Արծրունիք և Գնունիք (Խորենացի, Ա.իգ.Բը.Գ.ծե): Այս ծագման ավանդությունն այնուհետև ընդհանրացած ենք գտնում հետագա մատենագիրների մեջ: Առաջին անգամ հիշողը Խորենացին է, կամ իր աղբյուրը՝ Մար-Աբաս»*/ [Աբեղյան, երկեր, Ա, 1966, էջ 38/](#)

Խորենացու ժամանակ Սանասարի զրույցն արդեն ընդունված և տարածված է եղել: Արծրունիներն իրենք իրենց սերած են համարում Սանասարից: Շավասպ Արծրունին, պատասխանելով Շապուհ թագավորին, ասում է .«Ճանաչեմ և զիս արքայորդի ի սերմանե Սանասարայ»: Այս ավանդությունն այնուհետև բերում է Թովմա Արծրունին՝ ավելացնելով, որ ազնվականները ծագել են Սանասարից և իր եղբորից, իսկ հասարակ ժողովուրդը սերվել է այն քառասուն տուն ռամիկ մարդկանցից, որ երկու եղբայրները բերել էին հետները և բնակեցրել Սասունում:

Այսպես մեր էպոսի առաջին ճյուղի հնությունը հասնում է մինչև Խորենացու ժամանակը, սակայն հիշենք, որ էպոսի հյուսվածքի ամեն մի փոփոխություն միշտ էլ կապվում է ասացողներից:

Շատ բանահավաքների վկայություններով՝ վիպասացները վիպերգը համարել են իրենց նախնիների պատմությունը, իսկ վիպական հերոսներին՝ իրականում ապրած ու գործած անձնավորություններ: Դրա լավագույն վկայություններն են պատումներում առկա նախերգանք - ողորմիները, ուր ժողովրդական ավանդական սովորությամբ, սրբազան երկյուղածությամբ ողորմի են տալիս և հիշում են վիպերգի հերոսներին՝ իբրև երբեմնի ապրած և անցած նախնիներ: Այս վերաբերմունքի պատճառով էլ վիպասացները ձգտել են վերապատմել այնպես, ինչպես լսել են նախնիներից:


Ինչպես պարզ է դառնում Օրբելու հետազոտությունից, ով ծանոթ է այլ ժողովուրդների էպիկական զրույցներին, որոնց հետ պատմահամեմատական մեթոդով բաղդատում է «Սասունցի Դավիթ» էպոսը: Զուգադրված են հունական էպոսի Անթեյը և հայկական դյուցազներգության Սանասարը. «Ջրով հարուստ, սակայն ցանքատարածություններով աղքատ

Հելլադայում Անթեյն իր ուժն ստանում է հողից, իսկ Հայաստանի կյանքի պայմաններում, որտեղ ժողովրդի բարօրությունն ամբողջապես կախված է ոռոգումից, Սանասարի գործության աղբյուրը ջուրն է: Միերի կերպարը էպոսագետը գուգահեռում է իրանական Միհր աստծու հետ, որը զրադաշտական կրոնի սրբազան մատյանում՝ Ավեստայում, կարևորագույն աստվածներից է: Օրբելին նույն Միերի կերպարում տեսնում է երկու Միերներ՝ առաջինը՝ Մեծ Միերը ծագող, հզոր արևն է, իսկ երկրորդը՝ Փոքր Միերը, հոգնած ու մայր մտնող արևը:

«Սասնա ծռեր» էպոսի հնագույն տարրերն են կազմում Սանասար-Բաղդասարի և Փոքր Միերի ճյուղերը, որոնք ամփոփում են վաղնջական առասպելներ՝ սրբազան երկվորյակների և հեթանոսական Միհր աստվածության մասին: Դրանք արտացոլում են մարդկանց նախնական պատկերացումները վաղնջական մարդու շինարար-մշակութային գործունեության (Սանասար, Բաղդասար) և բնության, մասնավորապես տիեզերական երևույթների, լույսի և խավարի, երկնքի և արեգակի, հետագայում նաև արդարության և փրկության գազափարների (Միեր) վերաբերյալ:

Միհրի պաշտամունքը լայն տարածում է ունեցել Հայաստանում. Միհրը հանդես է գալիս հայ հեթանոսական դիցարանում իբրև երկնային գերագույն աստծո՝ Արամազդի որդի, Անահիտի և Նանեի եղբայր: Ազաթանգեղոսի վկայությամբ՝ Միհրի տաճարներից մեկը գտնվել է Բագահառիճում, որը քրիստոնեության ընդունման ժամանակ կործանվում է Գրիգոր Լուսավորչի կողմից: Հին հայկական տոմարում այժմյան փետրվարը կոչվել է Մեհեկան կամ Միհրական՝ Միհր աստծո անունով: Հայկական հոգևոր երգերում նշանակալից տեղ գրավող լուսերգության մոտիվները և արևագալի շարականները մեկնաբանվում են իբրև Միհրի հեթանոսական պաշտամունքի թողած գորեղ ազդեցության արդյունք: Պատահական չէ, որ շատ սիրված Միհր-Միեր անունը այսօր գտնում ենք «Սասնա ծռեր» վիպերգում . այն դարձել է հայ ժողովրդի սիրված հերոս Դավթի հայր և որդի: Որդի Միերը ավելի հզոր է, քան Դավիթը, մի ղյուցագուն, ով արդարության մեծագույն նախանձախնդիրն է, խավարի ու մութ ուժերի սարսափելի հակառակորդը, անհաշտ է աշխարհի անարդարությունների նկատմամբ և միշտ հաղթանակով է դուրս գալիս չար ուժերի դեմ մղած պայքարում:

Միևս աստծո ժայռից ծնված լինելու հանգամանքը հիմք է հանդիսացել առասպելական մեկ այլ ժայռերում բանտարկված դյուցազունների միջազգային հնագույն առասպելին հարակցվելուն: Հոր անեծքով անմահ ու անժառանգ մնացած Մհերը փակվում է ժայռում և կրկին աշխարհ պետք է գար, երբ գարին դառնա ընկույզի, իսկ ցորենը՝ մասուրի չափ: Ոմանք էլ հավատացել են, թե Մհերը դուրս է գալու և փրկելու է հայ ժողովրդին իր տառապանքներից:



Փրկության այս գաղափարը հետագայում գրեթե նույնությամբ փոխանցվել է քրիստոնեությանը , և Միևս-փրկչի փոխարեն հանդես է գալիս Քրիստոսը: Գարին ընկույզի և ցորենը մասուրի չափ տեսնելու գաղափարը խորհրդանշանն է ապրուստի միջոցների առատության, հավերժ կեցության և արդարության երազանքի, որ ժողովուրդը վերագրել է իր սիրելի հերոսին: Եվ երբ, ըստ մի քանի պատումների, Համբարձման կամ Զատիկի գիշերը քարայրը բացվում է, Մհերը դուրս է գալիս ժայռից, փորձում հողի ամրությունը, հովիվներն են տեսնում առաջինը Մհերին և կամենում են երկրպագել նրան:

«Մասնա ծռերն» իր չորս ճյուղերով անդրադարձնում է մեր պատմության ամբողջ ընթացքը՝ սկսած իր ծագման նախնական ժամանակներից մինչև նոր ժամանակներ: Համոզվելու համար բավական է թեկուզ խիստ ընդհանրացված հիշատակել մեր վեպի էական թեմատիկան իր հիմնական գծերով:

1. *Հայրենիքի և պետականության հիմնադրում*. Սանասարն ու Բաղդասարը հիմնում են Սասունը, բնակեցնում, ստեղծում Սասնա իշխանություն:
2. *Եկեղեցիների, բերդերի, վանքերի, կամուրջների կառուցում՝ իբրև կրոնական, ռազմական, տնտեսական, քաղաքական ինքնություն գոյության հենարաններ*. Սանասարն ու Բաղդասարը կառուցում են Սասնա բերդն ու քաղաքը, Մեծ Մհերը հիմնում է որսասարը և Մարութա վանքը, կառուցում բերդեր, կամուրջներ, Դավիթը նորոգում է հոր ավերված վանքը, որսասարը, հիմնում վանական միաբանություն, Փոքր Մհերը կամուրջ է կապում:
3. *Պայքար օտար բռնատիրությունների, նրանց ոտնձգությունների դեմ*. Բաղդադի խալիֆի կռիվը հայերի դեմ, Ծովինարին բռնի կնության առնելը, Սանասարի մահից հետո Սասունի բռնի հպատակեցումը Մսրա Մելիքին, Մսրա հարկահանությունը, կանանց ու աղջիկների գերեվարումը, Մարութա վանքի կողոպուտն ու ավերը:
4. *Ընդվզում և պայքար օտար բռնատիրությունների ոտնձգությունների դեմ*. Դավթի մանկությունը Մսրում, չինագանդվելը Մելիքին և թրի տակով չանցնելը, հարկահաններին պատուհասելը:
5. *Հայրենիքի քաղաքական և տնտեսական ազատագրում, ինքնություն պետականության վերականգնում*. Դավիթն ու Քեռի Թորոսը կռվում են Մելիքի զորքի դեմ, Դավիթն սպանում է Մսրա Մելիքին, ազատագրում Սասունը, Փոքր Մհերը հաղթում է թշնամիներին, ապահովում երկրի անկախությունը:
6. *Հայ պետականության անկում և աստիճանաբար քայքայում*. Դավիթն սպանվում է, թշնամիներն աշխուժանում են, Փոքր Մհերը թեպետ լուծում է հոր վրեժը, բայց արտաքսվում է և հեռանում հայրենի տնից. Սասնա տան միակ ժառանգը մնում է անսերունդ, քաշվում, փակվում է քարայրում. Սասունը որբանում է, անտիրանում:
7. *Ազգային ազատագրության, պետականության և համընդհանուր արդարության վերականգնման երազներ*. Փոքր Մհերը պետք է դուրս գա քարայրից, անօրենների ձեռքից ազատի հայ ժողովրդին և վերականգնի ճշմարտությունն ու արդարությունը:

Ահա մեր էպոսի թեմատիկան, որ այլ բան չէ, քան հայ ժողովրդի իրական պատմությունն իր բնորոշ գծերով՝ արտացոլված գեղարվեստական պատկերներով ու կերպարներով, վիպական չափազանցություններով և հավատալիքներով:

« Մի խոսքով վեպն ինքը ժողովուրդն է » (Մանուկ Աբեղյան):

«Սասնա ծռեր» դյուցազներգության դասավանդումը

(Դասի պլանավորում)

Դասարան՝ 9-րդ

Դասի թեման՝ «Սասնա ծռեր» դյուցազներգությունը: Կառուցվածքը, գեղարվեստական յուրահատկությունները:

Դասի նպատակը՝ 1. Ջարգացնել աշակերտների քննադատական մտածողության, «քննադատական կշռադատման մեջ ներգրավելու, սեփական մեկնակետով նյութին մոտենալու և վերլուծելու կարողությունները:

2. Ծանոթացնել համաշխարհային բանահյուսության արվեստի նմուշներին՝ հնարավորություն տալով աշակերտին ինքնուրույն զուգահեռ անցկացնելու վերջիններիս և հայկական էպոսի միջև:

3. Էպոսի գլխավոր հերոսների օրինակով դաստիարակել ազգային վեհ և ազնիվ գծեր:

Դասի տիպը՝ ԽԻԿ, դասի կիրառելի մեթոդներ՝ ԻՈԻՍ (իմանալ, ուզենալ, սովորել) աղյուսակի կիրառում, «Ակադեմիական հակասություն», «Անկյուններ»:

Դասի ընթացքը – աշակերտների հաշվառումից հետո դասարանը բաժանում են խմբերի (3-4): Խմբերին առաջարկում են գրել այն ամենը, ինչ գիտեն էպոսի մասին: Քննարկումից հետո խմբի խոսնակը ներկայացնում է իրենց խմբի կարծիք-ցուցակը, որը արագ համառոտագրում են գրատախտակին: Գրելն ավարտելուց հետո հարցնում են մյուս աշակերտներին՝ համաձայն են արդյոք տվյալ ցուցակում ընդգրկվածից: Պատասխաններում կարող են լինել իրարամերժ

կարծիքներ. չնայած դրան՝ քաջալերում եմ աշակերտներին արտահայտելու իրենց կարծիքը, ընտրելու կամ մերժելու այս կամ այն տեսակետը՝ իհարկե հիմնավորումով:

Բանավեճի արդյունքում գրատախտակին հայտնվում է «ցանկալի» ցուցակը:

1. Էպոսը (վիպերգություն, դրուցագներգություն, էպոպեա, հերոսական պոեմ) բանահյուսական ժանրերից ամենախոշորն է իր ընդգրկումով, ծավալով և նշանակությամբ: Աշակերտները հիմնավորում են իրենց պատասխանները այսպես. դեռևս միջին դասարաններից ծանոթացել են բանահյուսական ժանրերից շատերին՝ առակ, հեքիաթ, առասպել, լեգենդ, և, իրավամբ, էպոսն ամենից ծավալունն է և ընդգրկունը:
2. Էպոսը մարմնավորում է տվյալ ժողովրդի պատմության հերոսական էջերը:
3. 3. Էպոսը կազմավորվում է աստիճանաբար, դարերի ընթացքում, ժողովրդական հերոսական երգերից ու զրույցներից:
4. Ցանկացած էպոս իր մեջ համաշխարհային մշակույթի տարրերն է կրում:
5. Ցանկացած էպոս ցուցադրում է տվյալ ժողովրդի կենցաղը, ավանդույթները, դավանաբանությունը, դիցաբանական մտածողությունը, անշուշտ նաև ժողովրդի հավաքական բնավորությունը:
6. 6. Գլխավոր հերոսները ժողովրդի լավագույն զգերի, ձգտումների ու իդեալների կրողն է:
7. Ցանկացած էպոս ստեղծվում է բանավոր, չափածո, կանոնավոր կամ անկանոն հանգերով:

Վերոհիշյալ ցուցակը բոլոր խմբերի քննարկումների արդյունք է:

Չեմ մոռանում աշակերտների համար ընթերցել Հ. Թումանյանի հետևյալ միտքը. «Ժողովուրդները ոչ մի բանի մեջ ենքան պարզ ու պայծառ չեն երևում, ինչքան իրենց ազգային էպոսի մեջ»:

Մտազրոհը, որին «ենթարկվեց» դասարանը, խթանեց, որ երեխաները խոսեն անկաշկանդ, առանց վախենալու սխալվելուց: Առաջնորդվելով նույն եղանակով՝ խթանել, հետաքրքրել, ոգևորել, առաջադրում եմ հաջորդ հարցը.

- Ի՞նչ կառուցվածք ունի հայկական էպոսը:

Բնականաբար, դասարանն ունի հստակ պատասխան, այն է.

- Հայկական ժողովրդական էպոսը բաղկացած է մասերից, որոնք կոչվում են ճյուղեր և անվանվել են գլխավոր հերոսների անուններով:

Առաջին ճյուղը՝ «Սանասար և Բաղդասար», երկրորդ ճյուղ՝ «Մեծ Մհեր», երրորդը՝ «Սասունցի Դավիթ» և չորրորդը՝ «Փոքր Մհեր»:

«Ակադեմիական հակասությունից» օգտվելով՝ առաջադրում եմ խմբերին գրել իրենց ենթադրությունները հետևյալ հարցադրման շուրջ.

- Ինչու՞ մեր էպոսը հենց քառաճյուղ է և ոչ ասենք եռաճյուղ կամ հնգաճյուղ: Ի՞նչ գաղտնիք կարող է թաքնված լինել 4 թվի գաղափարում:

Այս հարցադրումն անշուշտ ամենաբուռն քննարկման տեղիք է տալիս: Որպեսզի դասարանը ունենա որևէ ուղենիշ, փորձում եմ տալ ուղղորդող «բանալի»:

-Հիշեք՝ ինչ գիտեք թվերի մոգության մասին:

Քննարկման արդյունքում դասարանը իմ օգնությամբ հասկանում է, որ մեր իմաստուն ժողովուրդը 4 թվի գաղափարով արտահայտել է աշխարհի և կյանքի գոյությունն իմաստավորող 4 տարրերի՝ ջրի, հողի, կրակի և օդի գաղափարը՝ հերոսներից յուրաքանչյուրի բնավորությունն ու էությունը կապելով այդ երևույթներից որևէ մեկի հետ:

Բանավեճերով հանգում ենք հետևյալ տարբերակին՝

Սանասար – ջուր

Մեծ Մհեր – հող

Սասունցի Դավիթ – կրակ

Փոքր Մհեր - օդ

Այս ճորս ճյուղերն էլ միևնույն չքնադագեղ խաչքարի 4 թներն են՝ իրենց հիմքում միացած, միասնականացած, որն ստեղծում է կուռ, ամբողջական բովանդակություն:

Աշակերտներին ուղղում եմ հաջորդ հարցը.

-Ինչու՞ էպոսի գլուխները կոչվեցին ճյուղեր:

Տոհմաճառ. այս բառով չես զարմացնի և ոչ մի հայի: Յուրաքանչյուր հայ գիտի՝ ինչ է դա, և իրեն համարում է իր իսկ տոհմաճառի մի ճյուղ: Վերջում դասարանը լրացնում է աղյուսակը:

Ի՞նչ գիտեի	Ի՞նչ էի ուզում իմանալ	Ի՞նչ սովորեցի

Հանձնարարում եմ տնային. Գրականության տեսքում շարադրել մտորումները հետևյալի շուրջ.

-Ինչու՞ ժողովուրդը առավել սիրեց երբորդ ճյուղը և պատմական հիշողությամբ ամուր պահեց մեր էպոսի «Սասունցի Դավիթ» անվանումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սասունցի Դավիթ» ազգային դյուցազներգությունը մեր մշակույթի ամենաճանաչված կոթողներից է նաև ամբողջ աշխարհում: Դեռևս խորհրդային շրջանում այն թարգմանվել է բազում լեզուներով, իսկ 2012-ին «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսի կատարողական դրսևորումները» հայտն ընդգրկվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակում:

Մեր ազգային էպոսը բարձր հայրենասիրության ու համամարդկային գաղափարների գեղարվեստական անթերի դրսևորում է, և այդ գաղափարի համար հավասարապես պայքարում էին և՞ կին հերոսները, և՞ տղամարդ, երբ իշխող դասերի արտահայտիչները քարոզում էին հնազանդվել տերերին, համակերպվել դաժան իրականությանը, իսկ ժողովուրդը առաջ էր քաշում պայքարի միջոցով ազատ ու երջանիկ կյանք ստեղծելու տեսակետը: Էպոսը զարգացնում է ժողովուրդների իրավահավասարության ու բարեկամության, կնոջ ու տղամարդու հավասարության, ազնիվ ու ստեղծագործ աշխատանքի, ազատության ու սոցիալական հավասարության գաղափարները: Հենց այդ գաղափարներով էլ «Սասունցի Դավիթ» էպոսն անմահ է և այսօր էլ ծառայում է առաջադեմ մարդկությանը:

Օգտագործված գրականություն

1. Սարգիս Հարությունյան -Կուլտուր-պատմական ակնարկ, «Սասնա ծռեր»,1977թ
2. Մանուկ Աբեղյան -- Երկեր, հ. Ա,1966թ.
3. Աելիտա Դոլուխանյան –Հովսեփ Օրբելին և «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոսը
4. Դավիթ Գասպարյան -----Գրականություն 9